

ԼԵՂՈՒՄԴԻՏԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՅԵՐԷՆ՝

Արդէն մտնում ենք ժԹ. դարը, որ աշխարհարարի տիրապետութեան դարն է, Դարիս միայն առաջին երեսնամեակում լոյս են տեսնում տասը աշխարհաբար գիրքը, որոնցից երկուսը արեւելահայ բարբառով, Հիմք է դրւում հայ լրագրութեան, Ջհալ-ւելով Հնդկաստանի Ազգաբարձը՝ որ հայոց առաջին թերթն էր գրաբար լեզուով (1794-96), 1800 թուին վենետիկում Հ. Ղուկաս Ինճեհեանը հրատարակել է սկսում Տաւր-գոլաթիւն անուն թերթը, որ տարին մի անգամ էր լոյս տեսնում և նոյն տարում պատահած դէպքերի ամփոփումն էր: Տարեգրութիւնը շարունակուեց մինչև 1802, Այս թուին դադարեցնելով թերթի հրատարակութիւնը Հ. Ղուկաս Ինճեհեանը յաջորդ 1803 թուից սկսեալ հրատարակել Սլանակ Բիւզանդեանը, որ նախապէս տարեկան մէկ անգամ էր դուրս գալիս և որի հրատարակութիւնը տեւեց մինչև 1820: 1821 թուին դարձեալ վենետիկում, Պոլսոյ Արշարունեաց ընկերութեան նպատակով հրատարակուիլ սկսեալ Դիթաի Բիւզանդեանը երկշաբաթաթերթը, որի խմբագիրներն էին Հ. Գրիգոր Վրդ. Գապարաճեան և ուրիշները: Այս թերթն էլ տեւեց մինչև 1816: Այնուհետև մի քանի տարի հայերը զուրկ են լրագրութիւնից: 1822ին Հնդկաստանում հրատարակում է Շեսմարան Օմանսփոռն թերթը՝ Ջուզայեցոյ բարբառով, 1831 թուին Պոլսի էր եկել Ալեքսանդր Բլակ անունով Փրանսիացին և սկսել էր հրատարակել Մոնիսեռ Օսման անունով Փրանսերէն լրագիրը, իբրև Բ. Դրան առաջին պաշտօնական թերթը, Յաջորդ տարին սկսում է նոյն նպատակով Թափլիսի Վաֆայի թուրքերէն թերթը, խմբագրութիւնը միաժամանակ որոշում է և հրատարակել նոյն թերթի հայերէն թարգմանութիւնը,

անունը դնելով Թափլիսի Վաֆայի, Լոյ Դիր, որ յետոյ դարձաւ «Լոյ գիր մեծի տեղութեանն օսմանեան»: Այս թերթը երեսուն էր շաբաթական մի անգամ և պարունակում էր միայն տեղական լուրերը: Նա ապրեց միայն մի տարի (1832-3) և թէև բովանդակութեան կողմից շատ ոչինչ թերթ էր, բայց և այնպէս վախճում է առաջին Պոլսահայ թերթը լինելու պատիւը:

Ի՞նչ ընթացք է բռնում աշխարհաբար այս շրջանի մէջ, Կրողներին մէջ կամաց կամաց սկզբունք է դառնում այն միտքը թէ լաւ և պիւրահասակաւ աշխարհաբար ունենալու համար պէտք է նախ հրաժարիլ գրաբար քերականութիւնից, երկրորդ՝ օտար (ընդհանրապէս թուրքերէն) բառերի տեղ դնել նրանց համապատասխան հայերէնը, երրորդ՝ խուսափել տեղական բարբառային ձևերից: Առաջին կէտը շատ հեշտ գործադրելի մի միջոց էր, բայց դա ծնունդ էր տալիս մի նոր հարցի, որ բարբառը ընդունել էր մի՞թէ՞ հետեւելու համար նրա քերականութեան: Սթէ այդ հարցը գրուած լինէր մի այնպիսի ժամանակ, երբ հայ ժողովուրդը ամէն տեղ մամուլ, դպրոց և գրականութիւն ունեցած լինէր, իսկապէս լուծուած շատ զժուար պիտի լինէր և տեղի պիտի տար մեծամեծ վէճերի և տարածայնութեանց, Բայց այն ժամանակ մամուլ կար միայն վենետիկում, Պոլսում, Ջմիւռնիայում և Հնդկաստանում: Միւսները, եթէ գոյութիւն ունենային էլ, շատ երկրորդական արժէք ունէին և սրանցից մէկին կամ միտին հպատակ (այսպէս Ջուզա, Պետերբուրգ, Միլան, Լիւվոռն, Թրիեստ, Վիեննա և այլն). Հռոմի տպարանը փակուել էր 1784ին, Ամստերդամինը նոյնպէս: Բայց Պոլսի և Ջմիւռնիայ գրեթէ միևնոյն բարբառն ունէին. վենետիկում նստած հայերն էլ ամենամեծ մասամբ Պոլսեցի էին. միաբանութեան հիմնարկութեան առաջին երկհարիւրամեակում վենետիկը ունեցել է ընդամենը 277 միաբան, որոնցից 138ը Պոլսեցի, այդ միաբաններից որեւէ զբաղւած աշխատանք արտադրողներ թիւը եղել է միայն 91, որոնցից 49 Պոլսեցի, 8 Տրապիզոնցի, 5 Կարնեցի, 3 Էնիդիւրիցի, Ճապեպանցի ալ և ալ տեղերից: Այդպէսով հարցը լուծուում էր ինքնին. Պոլսի բարբառը պիտի յաղթանակէր առանց որ եւ է

(*) Շառլմեայիսիւն՝ մեծամեծ հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործն (ԻՋ. Գլուխ):

պատճառաբանութեան, լսկ տեղի և հանգամանքների բերամար: Աւելացնենք նաև այն որ գաւառների ժողովուրդն էլ շարունակ Գոլսի բարբառը: Վերջապէս այն ուսումնասէր անձերն էլ, որոնք ուզում էին գրականութեամբ պարագել, իրենց գաւառներում մամուլ չունենալու պատճառաւ, ստիպուած էին բնականաբար Գոլսի կամ Զմիւռնիա հաստատուիլ և հետեւաբար մայրենի բարբառը թողնելով մշակել Գոլսականը: Այսպէսով Գոլսի բարբառի զիրքը՝ իբր հիմք գրական լեզուի վճռում էր:

Երկրորդ սկզբունքն էր օտար բառերի տեղ դնել նրանց համապատասխան հայեւրէնը: Գոլսի բարբառը թուրքերէն բառեր չստ ունի. դրանց թիւը, ինչպէս տեսանք գլուխ ԻԲ. 4000 էր: Գաւառների հայերը գրեթէ սրանց կէտն ունէին: Դրա համար էլ շարունակ ծաղրում էին Պոլսեցոց խօսակցութիւնը: Բայց իրենց համար աւելի տարօրինակ և անխորթ էր լսել թուրքերէն բառերի այսքան յաճախակի գործածութիւնը՝ հայերէն գրուած քնքերի մէջ: Այս պահանջին բաւարարութիւն տալու համար զրոգները ստիպուեցին թուրքերէն բառերի տեղ դնել հայերէն համապատասխան ձեւերը: Սրա համար էլ երեք միջոց կար. առաջին՝ դիմել գրաբարին և այնտեղից փոխ առնել պատրաստ հայերէն ձեւերը. երկրորդ՝ գաւառական բարբառների մէջ փնտռել իրենց ուզածը. երրորդ՝ հնարել նորանոր հայերէն բառեր: Սրա համար հրատարակուեցին զանազան ժամանակ մեծ ու փոքր բառարաններ ու բառացանկեր՝ գրաբարից աշխարհաբար (հետն առնելով նաև թուրքերէն ձեւերը), և աշխարհաբարից գրաբար: Վերջին անունն է կրում Մխիթար Աբրաքի (Հին Հայկազեան) բառարանի Գ. հատորը, որ մեծագոյն մասամբ թուրքերէնից գրաբար բառարան է (Վենետիկ 1769): Բառակերտութիւնը լայն ծաւալ բռնեց և յատկապէս եւրոպական գիտական բառերը արագութեամբ հայերէնի թարգմանուեցան: Եւ որովհետեւ ինչպէս նորակերտ բառերը, նոյնպէս և գրաբար բառերը շատերին անհասկանալի էին, ուստի զրոգները միշտ միասին դնում էին նաև ասմիկ կամ թուրքերէն ձեւը: Օրինակ՝ վերի 6րդ հատուածում ունինք

Արուարձաններով կամ վարըններով պատնէլ կամ էթէթերիզ
վրանի կամ չատըրի

Այս ձեւով գրողները ասմիկ թրքախօս ժողովրդին հայերէն էին սովորեցնում:

Երրորդ սկզբունքն էր խոսափել բարբառային ձեւերից: Այս կէտը կարօտ է առանձին քննութեան: Քանի որ քերականութիւն համար սկզբունքով հիմք էր ընդունուած Գոլսի բարբառը, սպասելի էր բնականաբար որ բառերի ձեւերն էլ Գոլսի բարբառից առնուէին: Խօնչն եղաւ պատճառ, որ մեր գրողները այսպէս չվարուեցին և նորից գրաբարին դիմեցին: Պատասխանը դժուարանում եմ տալ: Պատճառը թերեւս զրոգների հետախործիւնն էր, կամ այն գաւառների ազդեցութիւնը, որոնք Գոլսից տարբեր և գրաբարին աւելի հարազատ ձեւեր ունէին, և կամ թէ միանգամ որ օտար բառերի համար ընդունուած էր գրաբարին դիմել, սովորութիւն եղաւ նաև միւս (աղաւաղեալ) բառերի համար էլ դիմել գրաբարին: Կարելի է որ այս երեք պատճառներն էլ գործակից հանդիսացան. արդիւնքն այն եղաւ, որ մինչդեռ առաջ գրում էին այս կամ այն գաւառական ձեւով, յետոյ արդէն անցան բառերի գրաբար ձեւերին: Այս ողջամտ որոշումը մի մեծ բարիք եղաւ մեզ համար. զանազան բարբառները ի մի ձուլուեցան և ժամանակակից հայը անցեալից չկտրուեց: Որքան դժուար պիտի լինէր հին հայերէնի ուսումը, եթէ, քերականութիւնը փոխուելուց յետոյ, նաև բառարանը փոխուած լինէր:

Ո՞վ եղաւ արդեօք այս գեղեցիկ նորմութեան հնարիչը և ե՞րբ: Կարծիք կար որ առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն գործնողն եղաւ Զմիւռնիոյ անդրանիկ հայ թերթը՝ Շեմսիւրանը, որ Ամբիկեանի բողոքական միաբնակներից հրատարակութիւնն էր, և որի առաջին համարը լոյս տեսաւ 1839 Յունուար 1ին: Այս կարծիքը սակայն սխալ է: Շեմսիւրանից շատ առաջ, 1687 թուին Վենետիկ տպուած Պարգաբանութիւնը արդէն շատ ապօրոյ լեզու ունէր, թուրքերէն բառերի թիւը խիստ քիչ էր նրա մէջ և հայերէն բառերն էլ բարբառային ձեւով չէին, այլ գրաբար, ինչպէս ընթերցողը կարող է տեսնել վերը մէջ բերուած հատուածից:

Շատ մաքուր է նոյնպէս 1791 թուին վե-
նետիկ տպուած Տեսութիւն համառօտ հին
եւ նոր աթխարհագրութեան՝ Հ. Ղ. Ինճիւ-
եանի, որից նոյնպէս մի հատուած գրինք
վերը, վերջապէս մաքուր է ամէն կեր-
պով անթերի լեզու ունի Հ. Եղիա Վրդ.
Քոզմանեանի (Պոլսեցի) Գպարուքին նա-
մակաց, տպ. Վենետիկ 1805, որ պարու-
նակում է նամակագրութեան կանոններն
ու օրինակները՝ գրաբար է աշխարհաբար,
երկու լեզուով դէմ առ դէմ։ Այսպէս են
դարձեալ Յովակիմ ԲԺ. Օղուլլուխեանի՝
Նիւթ բժշկական, տպ. Վենետիկ 1806, Հ.
Մինաս Վրդ. Բժշկեանի՝ Պատմութիւն Պոն-
տոսի, Վենետիկ 1819, Հ. Մեսրոպ Վրդ.
Աղաչարագեանի՝ Բնական օրեմ կամ կրթու-
թիւն առ ի ինն լեզուի եւ պարկեօս Բա-
ղամաշի, Վենետիկ 1819 են։

Անկուրդ չենք համարում իբր նմոյշ
գնել այսօր շատ մաքուր, բոլորովին ար-
դիական աշխարհաբարով մի տապանագիր՝
1836 թուից, որ գտել է հրատարակել է
Յոսեփեան, Մասիս 1892 Սեպտ. 19։

ՏԱՊԱՆԱԳԻՐ

ՍԻՐԱԿԱՆԵԱՆ ՍԱՐԲԱՅ ՆԻԿՈԼԱՅՈՍ ԱՂԱՅԻ
ԴՈՒՍՏՐ ԻՍՊՈՒԼԻ

Անօրէն մահուան ուժի իննի հասաւ
Անուրիկ արեւս իծնի Եւստ Տեսաւ
Կաղաչեմ, Քրիկչա, այս խաւար բանեհ
Անմահ կեանքով զիս ողջնցուր նորէն
Հարս եկայ Բեզ ես Յիսուս իմ Յիսուս
Պզտիկ ե օտրիս Բայց մեծ ե յոյսը։

Սկսելով 1840 թուից տարուց տարի
շատանում են հայ թերթերը թէ Պոլսում
է թէ Զմիւռնիայում, որոնք աշխատում
են հետզհետէ մաքրել, պատրաստել ու տա-
րածել նոր գրական լեզուն։ Սրանցից նը-
շանաւոր են՝ Զմիւռնիոյ Արեւոյա Արա-
րաճեանը (1840—1886), եւրոպական առ-
ուան արժանի մի թերթ, որ առատ թըղ-
թակցութիւններ ունէր ամէն մի հայ գա-
ղութից, սկսած Զինաստանից մինչեւ Աս-
որիա, և այս բոլոր երկիրներին մէջ ցրուած
հայոց համար իբր մի կապ էր ծառայում,
— Վենետիկի Բազմավիպը (1843-ից մինչեւ
այսօր), — Պոլսի հայոց պատրիարքարանի
պաշտօնաթերթ Սուրհանդակը (1846), որ
յետոյ կոչուեց Հայաստան և վերջն էլ Մա-
սիս, Այս վերջինը (Մասիս) հայ մտքի մե-

ծագոյն աշխատանքը դարձաւ. այնտեղ
ստեղծուեցան, առաջարկուեցան, քննադա-
տուեցան, կազմուեցան և քաղաքացիու-
թեան իրաւունք ստացան բազմաթիւ հա-
յերէն նոր բառեր, գիտական, գրական,
ուսումնական ու հասարակական կենսա-
վերաբերեալ բառեր, պաշտօնական լեզուի
դարձուածներ, և եթէ այսօր հայերս ու-
նինք քիչ թէ շատ մշակուած լեզու, կա-
նոնաւոր գիտական ու պաշտօնական լեզու,
այդ պարտական ենք գլխաւորապէս Մա-
սիսին։

Գրական այս շարժումը որ նկարագը-
ցինք, մեծաւ մասամբ կատարում էր մեր
արեւմտահայ հատուածի կողմից, բայց նրան
անմիջական բաժնեկից էր նաեւ արեւելահայ
հատուածը։ Այն ժամանակ մեր երկու հատ-
ուածների միջև չկար այնպիսի անշատու-
մ, ինչպիսին յառաջացաւ շատ աւելի ուշ Գա-
լիցիներն ու ժամանակ։ Ռուսահայ
գրական գործիչները կարող էին ընդունել
արեւմտահայ գրական լեզուն և փոքր աշ-
խատանքով յարմարեցնել արեւելահայ ժո-
ղովրդի պահանջներին։ Բայց այդպէս չե-
զան։ Նրանք ստեղծեցին մի ուրիշ գրա-
կան լեզու, որի հեղինակն է համարում
Մոսկուայի Լազարեան ձեմաբանի ուսանու-
ղութիւնը և որի հիմքը Ներսէսի բարբառն
է։ Այստեղ էլ աշխատանքը տարուեց ճիշդ
այն ծրագրով, ինչպէս արեւմտահայ գրա-
կանի համար. — Քերականութիւնը վեր-
ցըւեց բարբառից, օտար բառերը վտարուե-
ցին և բառերը վերածուեցին իրենց գրա-
բար ձևին։

Արեւելահայ լեզուի առաջին նմոյշները
տեսանք արդէն վերեւում։ Մաքուր գրա-
կան լեզուի առաջին օրինակն է Կէօզպատ-
րայ Սարաֆեանի Բանալի գիտութեան (Պե-
տերբուրգ 1788)։ Աւելի յետոյ են Համառօտ
ֆննութիւն քիսոնեկական հաւասոց Մոս-
կուա 1831), Աւեսարանի ճեմարսութեան եւ
զօրութեան համար (Շուշի 1833), և վեր-
ջում Սաղմոսի քարգմանութիւնը (Զմիւռ-
նիայ 1843), բոլորն էլ մաքուր գրական
լեզուով։

Արեւելահայ առաջին թերթն եղաւ Թիֆ-
լիսի Արարատը՝ 1850 թ. (չհաշուելով Վոլ-
կա պաշտօնաթերթը՝ 1846 թ. որի լեզուն
գրաբար էր)։

ՎԵՐՋ

ՊՐՈՓ. Հ. ԱՃԱՌԵԱՆ